



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՊԵՏ

«11» նոյեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ.Անանյան

ՍՑ-ԳԲԽ-73/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. թիվ 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2016թ. թիվ 1/73-1/12587-16, 28.04.2016թ. թիվ 1/73-1/13128-16, 16.05.2016թ. թիվ 1/73-1/14143-16 գրություններով ներկայացված «Սեմիրամիդա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04224948) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ նաև՝ Նախարարություն) 21.04.2016թ. թիվ 1/73-1/12587-16, 28.04.2016թ. թիվ 1/73-1/13128-16, 16.05.2016թ. թիվ 1/73-1/14143-16 գրություններով դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Սեմիրամիդա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու համար:

Վերոհիշյալ գրություններով ՀՀ ֆինանսների նախարարությունը Կենտրոնին է ներկայացրել «ՀՀ Արարատի մարզի Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «ՀՀ Արարատի մարզի Դիմիտրովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «ՀՀ Արարատի մարզի Աբովյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատուներ) 11.04.2016թ., 11.04.2016թ. թիվ 237, 12.04.2016թ. գրությունների պատճենները:

2. «Սեմիրամիդա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 26.09.2016թ. ժամը 17:00-ին ՍՅ-ԳԲԽ-73/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Սեմիրամիդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացած Ընկերության աշխատակիցը առարկել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացությունների դեմ, համաձայն որի Ընկերությունը հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ: Ընկերության ներկայացուցիչը հայտնել է նաև, որ հայտերը ներկայացնելիս իրենք վստահ են եղել, որ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ և պարտավորվում են բողոքը քննող հանձնաժողովին ներկայացնել ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ ապացույցներ:

«Սեմիրամիդա» ՍՊԸ-ն Կենտրոնին ուղղված 26.10.2016թ. գրությամբ հայտնել է, որ հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ՝ 12.01.2016թ. և 13.01.2016թ. Ընկերությունը չի ներկայացրել հաշվետվություն, դրանից հետո ներկայացրել է ճշգրիտ հաշվետվություն

և արդեն 12.01.2016թ. և 13.01.2016թ. դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նատմամբ:

Ընկերությունը կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի տարածքային հարկային տեսչության 03.10.2016թ. թիվ 19-02/1692 և 06.10.2016թ. թիվ 19-02/1694 տեղեկանքները:

3. «ՀՀ Արարատի մարզի Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «ՀՀ Արարատի մարզի Դիմիտրովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «ՀՀ Արարատի մարզի Աբովյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

«ՀՀ Արարատի մարզի Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 11.04.2016թ. թիվ 237 գրությամբ հայտնել է, որ «Սեմիրամիդա» ՍՊԸ-ն 12.01.2016թ. հայտ է ներկայացրել «ՀՀ Արարատի մարզի Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված «ԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2-30» ծածկագրով գնման գործընթացին մասնակցելու համար, որտեղ ըստ հավելված 2-ի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ժամկետանց պարտքեր չի ունեցել, սակայն մրցույթը կայանալուց հետո սահմանված կարգով 13.01.2016թ. կատարված հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.01.2016թ. ստացվել է եզրակացություն, համաձայն որի «Սեմիրամիդա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 112,443 դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որի պատճառով մրցույթի գնահատող հանձնաժողովի 19.01.2016թ. թիվ 3 արձանագրությամբ որոշվել է 1-ին չափաբաժնով անցկացնել նոր մրցույթ, քանի որ ընթացակարգի 1-ին չափաբաժնով մրցույթին մասնակցել է միայն «Սեմիրամիդա» ՍՊԸ-ն:

«ՀՀ Արարատի մարզի Դիմիտրովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 11.04.2016թ. գրությամբ հայտնել է, որ «ՀՀ Արարատի մարզի Դիմիտրովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար հայտարարված «ԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2-21» ծածկագրով գնման գործընթացի

մասնակից «Սեմիրամիդա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ, որի պաճառով գնահատող հանձնաժողովի 19.01.2016թ. թիվ 3 արձանագրությամբ որոշվել է 1-ին չափաբաժնով անցկացնել նոր մրցույթ, քանի որ ընթացակարգի 1-ին չափաբաժնով մրցույթին մասնակցել է միայն «Սեմիրամիդա» ՍՊԸ-ն:

«ՀՀ Արարատի մարզի Աբովյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանը հասցեագրված 12.04.2016թ. գրությամբ հայտնել է, որ «ՀՀ Արարատի մարզի Աբովյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար 25.12.2015թ. հրապարակված «ԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/1-7» ծածկագրով կազմակերպվել է շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ: 13.01.2016թ. ընթացակարգին հայտ են ներկայացրել երկու մասնակից: Մասնակիցներից մեկը՝ «Սեմիրամիդա» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել 1-ին չափաբաժնի մասով: 14.01.2016թ. ուղարկել են հարցում և հարցման մեջ թյուրիմացաբար ՀՎՀՀ-ները նշվել է հակառակ և ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է պատասխան անվան և ՀՎՀՀ-ի անհամապատասխանության վերաբերյալ: 20.01.2016թ. ուղարկվել է 2-րդ հարցումը և ՀՀ ֆինանսների նախարարությունից չեն ստացել եզրակացություն՝ համարելով արդյունքը դրական, կնքվել է պայմանագիր: Կից ուղարկվում է գնման գործընթացին առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուները, պատշաճ ծանուցված լինելով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 26.09.2016թ. ժամը 17:00-ին նշանակված նիստի օրվա, տեղի և ժամի մասին, չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-73/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2016թ. թիվ 1/73-1/12587-16, 28.04.2016թ. թիվ 1/73-1/13128-16, 16.05.2016թ. թիվ 1/73-1/14143-16 գրություններով ներկայացված «Սեմիրամիդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀՀ Արարատի մարզի Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «ՀՀ Արարատի մարզի Դիմիտրովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և «ՀՀ Արարատի մարզի Աբովյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է համապատասխանաբար՝ «ԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2-30», «ԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/2-21», «ԱՀԴ-ՇՀԱՊՁԲ-15/1-7» ծածկագրերով գնում կատարելու ընթացակարգեր, որոնց մասնակցելու նպատակով 12.01.2016թ. և 13.01.2016թ. հայտեր է ներկայացրել «Սեմիրամիդա» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտերի թիվ 2 հավելվածներով՝ Ընթացակարգերին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարություններով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու օրերի դրությամբ (12.01.2016թ. և 13.01.2016թ.) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

3. Պատվիրատուները, Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ տվյալների ճշտման մասին 13.01.2016թ. կատարած հարցումներով խնդրել է Նախարարությանը տրամադրել տեղեկատվություն «Սեմիրամիդա» ՍՊԸ-ի վերաբերյալ:

4. Ի պատասխան վերոհիշյալ հարցումների՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուներին տրամադրվել է եզրակացություններ, համաձայն որոնց՝ «Սեմիրամիդա» ՍՊԸ-ն հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ՝ 2016թ. հունվարի 12-ի դրությամբ՝ 112,443 ՀՀ դրամի չափով և 2016թ. հունվարի 13-ի դրությամբ՝ 112,590 ՀՀ դրամի չափով ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն:

5. «Սեմիրամիդա» ՍՊԸ-ն Կենտրոնին ուղղված 26.10.2016թ. գրությամբ հայտնել է, որ հայտերը ներկայացնելու օրերի դրությամբ՝ 12.01.2016թ. և 13.01.2016թ. Ընկերությունը չի ներկայացրել հաշվետվություն, դրանից հետո ներկայացրել է ճշգրիտ հաշվետվություն և արդեն 12.01.2016թ. և 13.01.2016թ. դրությամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն ՀՀ պետական բյուջեի նատմամբ:

Ընկերությունը նույն գրությանը կից ներկայացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի տարածքային հարկային տեսչության 03.10.2016թ. թիվ 19-02/1692 և 06.10.2016թ. թիվ 19-02/1694 տեղեկանքները, համաձայն որոնց Ընկերությունը 12.01.2016թ. դրությամբ և

13.01.2016թ. դրությամբ չի ունեցել հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

5. ՍՑ-ԳԲԽ-73/16 պաշտոնական ընթացակարգի բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2016թ. թիվ 1/73-1/12587-16, 28.04.2016թ. թիվ 1/73-1/13128-16, 16.05.2016թ. թիվ 1/73-1/14143-16 գրությունները, «ՀՀ Արարատի մարզի Մրգավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «ՀՀ Արարատի մարզի Դիմիտրովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «ՀՀ Արարատի մարզի Աբովյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 11.04.2016թ., 11.04.2016թ. թիվ 237, 12.04.2016թ. գրությունները, «Սեմիրամիդա» ՍՊԸ-ի 26.10.2016թ. Կենտրոնին ներկայացված ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի տարածքային հարկային տեսչության 03.10.2016թ. թիվ 19-02/1692 և 06.10.2016թ. թիվ 19-02/1694 տեղեկանքները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի տարածքային հարկային տեսչության 03.10.2016թ. թիվ 19-02/1692 և 06.10.2016թ. թիվ 19-02/1694 տեղեկանքների համաձայն՝ «Սեմիրամիդա» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 04224948) 12.01.2016թ. դրությամբ և 13.01.2016թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Սեմիրամիդա» ՍՊԸ-ն 12.01.2016թ. դրությամբ և 13.01.2016թ. դրությամբ (հայտերը ներկայացնելու

օրերի դրությամբ), ըստ ՀՀ ԿԱ ՊԵԿ Արտաշատի տարածքային հարկային տեսչության 03.10.2016թ. թիվ 19-02/1692 և 06.10.2016թ. թիվ 19-02/1694 տեղեկանքների, չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն, ուստի գտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2016թ. թիվ 1/73-1/12587-16, 28.04.2016թ. թիվ 1/73-1/13128-16, 16.05.2016թ. թիվ 1/73-1/14143-16 գրություններով ներկայացված «Սեմիրամիդա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04224948) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Հիմք ընդունելով վերոշարադրվածը՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 21.04.2016թ. թիվ 1/73-1/12587-16, 28.04.2016թ. թիվ 1/73-1/13128-16, 16.05.2016թ. թիվ 1/73-1/14143-16 գրություններով «Սեմիրամիդա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04224948) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բոլորը մերժել՝ Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝




Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-73/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Դավթյան